ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՆՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆԻ՝ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Անունը, ազգանունը**
   Հրանուշ Հակոբյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**
   ՀՀ սփյուռքի նախարար

3. **Գործուղման վայրը և ժամկետները**
   Լիբանանի Հանրապետություն ս. թ. հուլիսի 10-14-ը

4. **Հրավիրող կողմը՝**
   Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսություն

5. **Գործուղման նպատակը՝**

- Մասնակցություն «Սփյուռքը նոր հորիզոնների դիմաց. Սփյուռքի հայի ինքնահասկացողությունը» գիտաժողովին,
- Հանդիպումներ հայկական համայնքի ներկայացուցիչների հետ՝ սերտացնելու համայնքային կառույցների հետ կապերը, տեղայնացնելու Սփյուռքի նախարարության ծրագրերը,
- Հայոց լեզվի վաստակաշատ ուսուցիչների, լիբանանահայ գործիչների պարգևատրում,
- Հանդիպում գործարարների հետ,
- Լիբանանի հայկական ԶԼՄ-ների հետ կլոր սեղան-քննարկումներ,
- Այցելություններ դպրոցներ, մշակութային կենտրոններ, եկեղեցիներ:

6. **Քննարկման թեմաները՝**

- Հայաստանի Հանրապետության հզորացում և Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորմանն ուղղված հայության ջանքերի մեկտեղում,
- ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ սկսված «Դու ի՞նչ ես անում Արցախի համար» շարժման ընդլայնում,
- Սիրիական ճգնաժամի արդյունքում առաջացած փախստականների ներկա իրավիճակին բոլոր ուղղություններով օգնության կազմակերպում,

- Տուրիզմի զարգացմանը նպաստող քայլերի և բիզնեսմենների խմբերի Հայաստան այցելությունների կազմակերպում:

7. Հանդիպումներ, ելույթներ, հարցազրույցներ, բարձրացված կամ քննարկված հարցեր

Հանդիպումներ՝

- Ն.Ս.Օ.Տ.Տ. Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսի հետ,
- Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Շահե արքեպիսկոպոս Փանոսյանի հետ,
- Ազգային վարչության ատենապետ Հակոբ Հավատյանի հետ,
- Լիբանանի ՀԲԸՄ շրջանային վարչության անդամ, ասպետների ղեկավար Արթուր Գոնտակչեանի հետ,
- Լիբանանի ՀՄԸՄ կենտրոնական վարչության ատենապետ Գառնիկ Մկրտիչյանի և վարչության անդամների հետ,
- Ցեղասպանագետ, Բոխումի համալսարանի «Սփյուռք և ցեղասպանություն» հետազոտությունների կենտրոնի ղեկավար Միհրան Դաբաղի հետ,
- Եվրոպայում Կաթողիկոսության միջեկեղեցական հարաբերությունների ներկայացուցիչ Թենի Սիմոնեանի հետ,
- Բեյրութի Ազգային միացյալ վարժարանի տնօրեն (Թալին Մարդիրոսյանի) ուսուցչական անձնակազմի հետ,
- Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումները համակարգող Լիբանանի հանձնախմբի ատենապետ Սեդա Խտրշեանի հետ,
- «Ազդակ» օրաթերթի գլխավոր խմբագիր, Լրագրողների համահայկական համաժողովները համակարգող մարմնի նախագահ Շահան Գանտահարյանի հետ,
- Բեյրութի «Խօսնակ» պաշտոնաթերթի գլխավոր խմբագիր Համբիկ Մարտիրոսյանի հետ,
- «Զարթօնք» օրաթերթի գլխավոր խմբագիր Սևակ Հակոբյանի հետ,
- «Արարատ» թերթի գլխավոր խմբագիր Անի Եփրեմյանի հետ,
- Աշրաֆիեի հայ կաթողիկե եկեղեցու ժողովրդապետ Սեպուհ վարդապետ Կարապետյանի հետ:

Ելույթներ՝

- Բիքֆայայի Ս. Աստվածածին վանքում՝ «Սփյուռքը նոր հորիզոնների դիմաց. Սփյուռքի հայի ինքնահասկացողությունը» գիտաժողովի բացման արարողության ժամանակ,

- Բեյրութի Ազգային միացյալ վարժարանում՝ ուսուցչական անձնակազմի հետ հանդիպման ժամանակ:
- Լիբանանի Հանրապետությունում ՀՀ դեսպանատանը՝ Հայոց լեզվի վաստակաշատ ուսուցիչների, լիբանանահայ գործիչների պարգևատրման ժամանակ,
- Լիբանանի Հանրապետությունում ՀՀ դեսպանատանը՝ լիբանանահայ լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ,
- ՀՄԸՄ վարչության անդամների հետ հանդիպման ժամանակ,
- Գործարարների հետ հանդիպման ժամանակ,
- Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումները համակարգող Լիբանանի հանձնախմբի անդամների հետ հանդիպման ժամանակ:

Հարցազրույցներ՝

- OTV հեռուստաընկերությանը,
- Լիբանանահայ լրագրողներին՝ Լիբանանում ՀՀ դեսպանատանը հանդիպման ժամանակ:

Բարձրացված հարցեր՝

- Հայ ինքնության պահպանման գլխավոր հենասյուները՝ դիտարկելով լեզուն, մշակույթը, ընտանիքը և եկեղեցին՝ երիտասարդների շրջանում լուրջ աշխատանքներ տանել ինքնության հիմնախնդիրների ամրապնդման ուղղությամբ,
- Յուրաքանչյուր կառույցի առջև խնդիր է դրվել, որ գոնե մեկ ներդրում բերի Հայաստանի Հանրապետություն,
- ԼՂ-ի խնդիրներով ավելի ակտիվ զբաղվել և սփյուռքյան կառույցների առաջնային խնդիր համարել ԼՂ հիմնախնդրի կարգավորմանն օժանդակելը,
- Շարունակել և ընդլայնել մասնագիտական ընկերակցությունների գործունությունը,
- Շարունակել պայքարը Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման և հետևանքների վերացման ուղղությամբ,
- Աշխատանքներ տանել լիբանանցի և հայ գործարարների կողմից ներդրումների իրականացում Հայաստանի Հանրապետությունում,
- Հասնել այն բանի, որ յուրաքանչյուր հայ այցելի Հայաստան, ճանաչի իր Հայրենիքը,
- Նպաստել տուրիզմի զարգացմանը, թափ հաղորդել «3 տարին մեկ անգամ հանգստանալ Հայաստանում» շարժմանը,
- Մասնակցել ՀՀ սփյուռքի նախարարության ծրագրերին,
- Լուրջ ուշադրություն դարձնել հայոց լեզվի ուսուցման հարցերին, «Տանը խոսենք հայերեն» շարժումը դարձնել յուրաքանչյուր կառույցի խնդիրը,

- Զբաղվել համայնքից հեռացած հայերին համայնքային կառույցների աշխատանքներում ներգրավելու հարցով:

Հուլիսի 9, 2017թ.

- ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը հանդիպում է ունեցել Ն.Ս.Օ.Տ.Տ. Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսի հետ, քննարկել են առաջիկա օրերի գիտաժողովի ձևաչափը, հայ ինքնության հետ կապված խնդիրներ: Նախարարը ներկայացրել է սեպտեմբերին կազմակերպվող «Հայաստան-Սփյուռք» 6-րդ համաժողովի նախա-պատրաստական աշխատանքների ընթացքը և առաջիկա անելիքները:
- Օրվա երկրորդ կեսին նախարար Հրանուշ Հակոբյանը հանդիպել է Եվրոպայում Կաթողիկոսության միջեկեղեցական հարաբերությունների ներկայացուցիչ շվեյցարահայ Թենի Սիմոնեանի հետ և քննարկել Շվեյցարիայի հայ համայնքի հիմնախնդիրները:
- Այնուհետև նախարարը հանդիպում է ունեցել ցեղասպանագետ, Բոխումի համալսարանի «Սփյուռք և ցեղասպանություն» հետազոտությունների կենտրոնի ղեկավար Միհրան Դաբաղի հետ: Քննարկման նյութը հայագիտական կենտրոններում ցեղասպանության թեմաթիկայի և հայագիտություն ուսումնասիրող ուսանողների հարցերն էին:

Հուլիսի 10, 2017թ.

- ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը Լիբանանում ՀՀ դեսպան Սամվել Մկրտչյանի ուղեկցությամբ այցելել է Բեյրութի Ազգային միացյալ վարժարանի նորակառույց համալիր: Նախարարին դիմավորել են Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Շահե արքեպիսկոպոս Փանոսյանը, Ազգային վարչության ատենապետ Հակոբ Հավատյանը, անդամներ Հակոբ Լուսարարյանը, Սյուզի Սեմերջյանը, վարժարանի տնօրեն Թալին Մարդիրոսյանը: Հրանուշ Հակոբյանը ծանոթացել է վարժարանի հարմարություններին, ուսումնական գործընթացը լիարժեք կազմակերպելու պայմաններին: Այնուհետ կայացել է հանդիպում ուսուցչական անձնակազմի հետ: Ողջույնի խոսքով հանդես է եկել տնօրեն Թալին Մարդիրոսյանը: Հրանուշ Հակոբյանը, կարևորելով սփյուռքում նման հիմնավոր կրթական հաստատության առաջիկա գործունեությունը, իր ելույթում անդրադարձել է մրցունակ կրթություն ապահովելու, հայեցի դաստիարակության և Հայաստանի հետ մշտական կապերի հաստատման և ամրապնդման խնդիրներին: Նախարարն առանձնահատուկ կարևորել է ուսուցչական անձնակազմի դերակատարությունը՝ նշված խնդիրները լավագույնս լուծելու և անհրաժեշտ մակարդակ ապահովելու առումով: Նախարար Հ. Հակոբյանն ընդգծել է ուսուցիչների՝ Հայաստանում վերապատրաստում անցնելու և փորձի փոխանակում իրականացնելու կարևորությունը: Իր խոսքում Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ հայր Շահե Փանոսյանը

բարձր է գնահատել ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի այցը Ազգային միացյալ վարժարան, արժևորել է Հայաստան-Սփյուռք փոխգործակցությունը, հայ եկեղեցու շուրջ համախմբումը՝ համազգային նպատակների հաջող իրականացման համար:

- Այնուհետև ՀՀ սփյուռքի նախարարը հանդիպել է Լիբանանի ՀՄԸՄ կենտրոնական վարչության ատենապետ Գառնիկ Մկրտիչյանի և վարչության անդամների հետ: Նրանց հետ քննարկվել է ս.թ. հուլիսի 20-29-ը Երևանում կայանալիք ՀՄԸՄ 100-ամյակին նվիրված ՀՄԸՄ 10-րդ համահայկական մարզախաղերի կազմակերպչական հարցեր: Հանդիպման ընթացքում նախարարը խոսել է նաև «Հայաստան-Սփյուռք» 6-րդ համաժողովի կազմակերպման ուղղությամբ տարվող աշխատանքների վերաբերյալ և քննարկել կառույցի մասնակցությունը համաժողովին:

Հուլիսի 11, 2017թ.

- Նախարարը Բիքֆայայի Ս. Աստվածածին վանքում մասնակցել է Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա-ի նախաձեռնությամբ կազմակերպված «Սփյուռքը նոր հորիզոնների դիմաց. Սփյուռքի հայի ինքնահասկացողությունը» գիտաժողովին: Գիտաժողովի բացումը կատարվել է Տերունական աղոթքով ու Արամ Ա կաթողիկոսի հայրապետական օրհնությամբ, որից հետո բացման խոսքով հանդես է եկել Երվանդ Փամբուկյանը: Այնուհետև հանդես է եկել Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը: Նա իր խոսքում ընդգծել է ազգային ինքնության և հայկական ինքնագիտակցության կարևորությունը: Նախարարը հայկական ինքնության խնդիրը համարել է ազգի առջև ծառացած ռազմավարական խնդիր, շեշտել, որ ինքնությունը փոփոխվում, տարբեր երանգներ է ստանում, դառնում բազմաշերտ: Հայկական ինքնության առանձնահատկությունների մասին խոսելով՝ նախարարը նշել է, որ այն ցեղասպանությունից հետո կրում է ցավ ու տառապանք: Անդրադառնալով ծպտյալ հայերի խնդրին, Հրանուշ Հակոբյանը հայտնել է, որ ՀՀ կառավարության 2017-2022թթ. ծրագրում անդրադարձ կա այդ հիմնախնդրին: Հայկական ինքնության մասին խոսելով՝ նախարարն անդրադարձել է խառնամուսնություններին և այնտեղ ծնված երեխաների ապագային, գիտակցորեն հայկականությունից հեռացած հայերին, աշխարհաքաղաքացի լինել ցանկացողներին, իսլամացած, ինչպես նաև իրենց արմատներին վերադառնալ ցանկացող հայերին: Այս ամենի կողքին Հրանուշ Հակոբյանը կարևորել է հայ մնալու երաշխիքները՝ եկեղեցի, դպրոց, պատմական հիշողություն, ընտանիք, ավանդույթների պահպանում, հայկական անուն, ազգանուններ, ազգային և մշակութային կառույցներ, մամուլ, հայկական խորհրդանիշեր, իսկ ամենակարևորն անկախ Հայաստանի ու Արցախի գոյությունը: Եզրափակելով իր խոսքը՝ նախարար Հրանուշ Հակոբյան նշել է, որ հայ երիտասարդին պետք է գրավիչ դարձնել հայկական ինքնությունը, Հայաստանն ու Արցախը, որպեսզի նրանց համար Հայաստանը դառնա տուն և ո՛չ թե պատմական հայրենիք: Նախարարը

շեշտել է, որ հիմնական նպատակը հայրենադարձությունն է: Նիստին ավարտին Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա. կաթողիկոսն, անդրադառնալով նման համագումարի կազմա-կերպմանը, նշել է, որ այն իրատեսության վրա խարսխված տարբեր փորձառությունները, տագնապներն ու հայեցակետերը միմյանց հետ կիսելու հավաքական ճիգ է՝ հեռու կարծրացած մոտեցումներից: Անդրադառնալով սփյուռքահայերի մեկ դար հայ մնալու պայքարի պատմությանը՝ կաթողիկոսը նկատել է, որ տարբեր պատճառներով ու այլազան հանգամանքների բերումով այսօր Սփյուռքի պայքարելու տոկունությունը սկսել է աստիճանաբար տկարանալ: Այս պարագայում ինքնությունն իբրև կազմավորման ու զարգացման մնայուն ընթացք նկատելով՝ Արամ Ա. Հայրապետը հաստատել է, որ ժամանակի ու պայմանների թելադրանքով այդ ընթացքը կարող է փոխվել, սակայն միջուկը մնում է նույնը: Այնուհետև Վեհափառը մանրամասնորեն խոսել է սփյուռքահայի ինքնության դիմագրավող վտանգների և մարտահրավերների մասին՝ մատնանշելով, որ հողը, լեզուն, ինքնաճանաչումը, պատկանելիության զգացումը, խորհրդանիշերի և կերպարների ներկայացրած արժեքը, քննական երկխոսության և ներդաշնակ հարակցության գոյությունը, ազգային գաղափարախոսության առկայությունն ու պահպանումը առանցքային դերակատարություն ունեն այս առումով: Նաև մատնանշել է, որ այսօր մեր իրականության մեջ ինքնության տարբեր ըմբռնումներ կան և հարց է, թե դրանք ինչպե՞ս համադրել և յուրաքանչյուրի նկատմամբ ինչպիսի՞ մոտեցում կարելի է ցուցաբերել:

- Այնուհետև նախարար Հ. Հակոբյանը հանդիպել է Լիբանանի ՀԲԸՄ շրջանային վարչության անդամ, ասպետների ղեկավար Արթուր Գոնտակչեանի և մի շարք ասպետների հետ: Հանդիպման ընթացքում Նախարարը ներկայացրել է նախարարության գործունեությունը, ծրագրերը՝ «Արի տուն», «Սփյուռք» ամառային դպրոց, «Իմ Հայաստան» համահայկական փառատոն, անդրադարձել է Լրագրողների համահայկական համաժողովի ժամանակ սկիզբ դրված «Դու ի՞նչ ես անում Արցախի համար» համահայկական շարժմանը և հորդորել է ավելի ակտիվ մասնակցել Սփյուռքի նախարարության ծրագրերին:

Հուլիսի 12, 2017թ.

- Նախարարն ողջ օրվա ընթացքում մասնակցել է «Սփյուռքը նոր հորիզոնների դիմաց. Սփյուռքի հայի ինքնահասկացողությունը» գիտաժողովի աշխատանքներին, տարբեր նիստերի և թեմաների շուրջ հայտնել իր կարծիքը, հանդես է եկել ելույթով:

Հուլիսի 13, 2017թ.

- ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը մասնակցել է «Սփյուռքը նոր հորիզոնների դիմաց. Սփյուռքի հայի ինքնահասկացողությունը» գիտաժողովի «Ո՞վ է սփյուռքահայը, ի՞նչ է նշանակում հայ լինել Սփյուռքում» թեմայով վերջին նիստին: Եզրափակիչ խոսքով հանդես է եկել ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, բարձր գնահատելով Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության նախաձեռնությունը, որը հնարավորություն է տվել տարբեր մոտեցումներով հասկանալ հայ ինքնության ներկան: Նախարարը կարևորել է ծրագրերը, որոնք իրականացվում են հային Հայրենիք բերելու ուղղությամբ: Նախարարն անդրադարձել է հայ ինքնության պահպանման ու զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքներին և կարևորել է երկու ուղղությունները՝ երիտասարդների մասնակցությամբ ձեռքբերած հաջողությունները և այն ձեռնարկներն, որոնք նպաստում են համայնքային կյանքից հեռացած հայորդիներին դեպի համայնք ու Հայրենիք վերադարձնելուն: Նախարարը հայ ինքնության ամրապնդման առաջնահերթություններ է համարել Արցախի և Հայաստանի հզորացումը, ցեղասպանության հետևանքների վերացումը: Եռօրյա հավաքին փակման խոսքով հանդես է եկել Ն.Ս.Օ.Տ.Տ. Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսը: Նա նշել է, որ Սփյուռքի հզորացումը ենթադրում է մեր կառույցների վերաշխուժացում, որտեղ կարևոր է հայ երիտասարդի դերը: Արամ Ա. Կաթողիկոսը հայտարարել է, որ Կաթողիկոսարանի Երիտասարդական բաժանմունքը Սփյուռքի համայնքներում թեմական մակարդակով կկազմակերպի հայ ինքնության պահպանման թեմայով համաժողովներ: Եզրափակելով խոսքը՝ Կաթողիկոսն ասել է, որ անհրաժեշտ է շարունակել սկսած աշխատանքները և նոր գործնական քայլեր կատարել հայ ինքնության պահպանման ուղղությամբ:

Հուլիսի 14, 2017թ.

- ՀՀ սփյուռքի նախարարը մասնակցել է Լիբանանի Հանրապետությունում ՀՀ դեսպանատանը տեղի է ունեցել հայոց լեզվի լիբանանահայ վաստակաշատ ուսուցիչներին նվիրված երախտագիտության ձեռնարկին: Իր ելույթում Հրանուշ Հակոբյանը, գնահատելով ուսուցիչների նվիրական աշխատանքը, կարևորել է նրանց ունեցած անփոխարինելի դերը Սփյուռքում Մայրենիի պահպանման և հայ սերնդի դաստիարակության գործում: Նախարարն իր խոսքում շեշտել է, որ հայ ուսուցիչը մեծագույն բարեգործ է, ով հայ նոր սերունդը կապում է Հայաստանին, ուսուցանում մայրենին՝ դրանով իսկ կառչած պահում իր արմատներին: Ձեռնարկի ավարտին տեղի է ունեցել պարգևատրման արարողություն, որի ընթացքում հայոց լեզվի վաստակաշատ և թոշակառու ուսուցիչները արժանացել են Սփյուռքի նախարարության գնահատագրին և «Երախտագիտության», «Մայրենիի դեսպան» մեդալներին:
- Այնուհետև Լիբանանում ՀՀ դեսպանատանը տեղի է ունեցել լիբանանահայ լրատվամիջոցների ներկայացուցիչների հանդիպումը ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ

Հակոբյանի հետ: Հանդիպման սկզբում «Ազդակ» օրաթերթի գլխավոր խմբագիր, Լրագրողների համահայկական համաժողովները համակարգող մարմնի նախագահ Շահան Գանտահարյանն ողջունել է ներկաներին ու նախարարին: Այնուհետև նախարարն անդրադարձել է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության նախաձեռնությամբ նախորդող օրերին Բիքֆայայում տեղի ունեցած «Սփյուռքը նոր հորիզոնների դիմաց. Սփյուռքի հայի ինքնահասկացողությունը» խորագրով գիտաժողովին: Ներկայացնելով քննարկված հարցերը՝ նա շեշտել է, որ ինքնության պահպանման շրջանակներում անփոխարինելի և մեծ դերակատարություն ունեն լրատվամիջոցները: Նախարարն ընդգծել է, որ հատկապես պետք է ուշադրություն դարձնել երիտասարդներին, էլեկտրոնային տարբեր եղանակներով փորձել միշտ կապ պահել նրանց հետ՝ ներկայացնելով հայկական իրականության մեջ առկա պայծառ ու հպարտության առիթ հանդիսացող դեմքերն ու դեպքերը, օգնել, որպեսզի նրանք լավագույնների օրինակով հպարտ զգան իրենց հայկական ինքնությամբ: Նախարարը կարևորել է նաև Արցախի թեման լուսարձակի տակ մնայուն պահելը, անդրադառձել է Հայաստանում կատարվող քաղաքական և տնտեսական բարեփոխումներին: Նա շեշտել է տնտեսական քաղաքականության նոր դրսևորումները, որի միջոցով ներդրողների ու գործարարների հնարավորություններն ավելանում են: Հրանուշ Հակոբյանը շեշտել է, որ լրատվամիջոցները պետք է գործեն այնպես, որ հայաստանյան այն օրենքներն, որոնք փոքր-ինչ բարդ են թվում, ավելի պարզ ու մատչելի ձևով ներկայացվեն գործարարներին, որպեսզի նրանք հայրենիքում աշխատանք նախաձեռնելու հնարավորությունները տեսնեն: Շնորհակալություն հայտնելով լրատվամիջոցներին՝ Սփյուռքի նախարարության բազմաբնույթ ու բազմաճյուղ աշխատանքների մասին հասարակությանը տեղյակ պահելու համար: Նա կարևորել է ՁԼՄ-ների աշխատանքը, որովհետև, ինչպես նկատել է նախարարը, լրատվամիջոցները նախարարության ապավենը, զենքը, դեսպաններն ու ներկայացուցիչներն են, որոնց միջոցով նախարարությունը իրազեկվում է Սփյուռքի պահանջներին և ակնկալիքներին, ինչպես նաև սփյուռքահայությունը ծանոթանում է նախարարության գործունեությանը: Իր խոսքի ավարտին, սփյուռքի նախարարը խոսել է սեպտեմբերին կայանալիք Հայաստան-Սփյուռք համահայկական 6-րդ համաժողովի մասին, որի ընթացքում նախատեսված է համախմբել 1500-1600 հայերի, որը կունենա քաղաքական, ազգային, բարոյական մեծ նշանակություն, կերևա հայի հզորությունը, միասնականությունը: Նախարարը խոսել է համաժողովի ընթացքում նախատեսված ժողովների, կլոր սեղանների, մշակութային ձեռնարկների և կայանալիք այցելությունների մասին՝ մաղթելով, որ լրատվամիջոցների ներկայացուցիչները ևս մասնակցեն նման կարևոր համաժողովին:

- Նույն օրը նախարար Հրանուշ Հակոբյանը հանդիպել է լիբանանահայ ոսկերիչների և գործարարների հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստանում ներդրումներ կատարելու, տուրիզմի զարգացմանը նպաստող քայլեր իրականացնելու հարցեր: Նախարարը ներկայացրել է Հայաստանի ներդրումային դաշտի

առանձնահատկությունները, գրավչությունը և նպաստավոր պայմանները և կոչ արել առավել սերտ կապեր հաստատել հայաստանցի գործարարների հետ: Հանդիպմանը մասնակցել են Լիբանանում ՀՀ դեսպան Սամվել Մկրտչյանը և լիբանանահայ գործարար Գագիկ Աբրահամյանը:

Բոլոր հանդիպումների ընթացքում նախարարը, դիմելով բոլոր կառույցների ղեկավարներին, անհատներին, կոչ է արել շարունակել միասնական գործել՝ հաջորդ տարի ՀՀ և Մայիսյան հերոսամարտերի 100-ամյակներին, ինչպես նաև Երևանի 2800-ամյակին նվիրված միջոցառումները կազմակերպելու, համադրելու և նախաձեռնություններ իրականացնելու առումով:

Հուլիսի 15, 2017թ.
Առավոտյան նախարարը վերադարձել է Երևան:

8. Գործուղվողը՝
Հրանուշ Հակոբյան

9. Ստորագրությունը, ամսաթիվը
19. 07. 2017թ.